

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ,
ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐ»
(Թիւ 6)

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2026

ՀՐԱՄԱՆԱԻ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Կեանքի մէջ ամէն դժուարութիւն, նեղութիւն, ցաւ, հալածանք, նախատինք, զրկանք ու անիրաւութիւն, փորձութիւն կը համարուի: Մարդը իր բնութեամբ հակամէտ է մերժելու ամէն տեսակի փորձութիւն, որովհետեւ ան կը նախընտրէ որ իր կեանքը ըլլայ փորձութիւններէ զերծ եւ հեզասահ կեանք մը: Գիտակից հաւատացեալը, սակայն, գիտէ եւ պէ՛տք է գիտնայ, որ ամէն փորձութիւն իր ետին օրհնութիւն մը ունի վե-

րապահած մեզի համար, եթէ անշուշտ յաղթենք փորձութեան: Տարօրինակ է մարդը, մէկ կողմէ կ'ուզէ յաղթողի վարձք ստանալ երկինքի մէջ, իսկ միւս կողմէ՝ կը մերժէ փորձութիւնները որոնք կրնան զինք յաղթող դարձնել: Այո՛, տարօրինակ է մարդը, կ'ուզէ երկինք մտնել, բայց չ'ուզեր երկինքի համար տառապանք կրել: Կ'ուզէ Քրիստոսի հաւատարիմ հետեւորդ իբրեւ ճանչցուիլ, բայց չ'ուզեր եւ պատրաստ ալ չէ այդ հետեւորդութեան համար զին վճառելու: Կ'ուզէ Քրիստոսի արքայութեան մէջ վարդ մը ըլլալ, բայց չ'ուզեր երկրի վրայ զինք ցաւցնող

փուշերու հանդիպիլ: Կ'ուզէ երկինքի փառքը ժառանգել, բայց չ'ուզեր երկինքի համար ունէ նախատինք կրել: Կ'ուզէ յաւիտենական կեանքը ժառանգել, բայց չ'ուզեր այդ կեանքին համար նեղութիւն քաշել: Մենք կը մոռնանք որ *«դէպի կեանք տանող դուռը նեղ է եւ ճամբան դժուարին, եւ քիչեր միայն կը գտնեն զայն»* (Մտ 7.14): Կը մոռնանք որ *«բազմաթիւ նեղութիւններ պէտք է կրենք՝ Աստուծոյ արքայութիւնը մտնելու համար»* (Գրծ 14.22): Կը մոռնանք որ *«նեղութիւններու մէջ ապրելու կոչուած ենք»* (Ա.Թս 3.3): Կը մոռնանք որ հակառակութեանց հան-

դիպիւր կրնայ մեր փրկութեան
ապացոյցը ըլլալ (Փլպ 1.28): Կը
մոռնանք որ երբ կրակի նման այ-
րող փորձութիւններէ կ'անցնինք՝
Քրիստոսի չարչարանքներուն է
որ մասնակցած կ'ըլլանք (Ա.Պտ
4.12-13): Եւ կը մոռնանք որ «*Աստ-
ուած ո՛չ միայն Քրիստոսի հաւա-
տալու շնորհքը տուաւ մեզի, այլ
նաեւ՝ անոր համար չարչարուե-
լու շնորհքը*» (Փլպ 1.29): Արդա-
րեւ, շնորհք մը չէ՞ արարածին
ձեռքով Արարիչին սիրոյն չար-
չարուիլը: Շնորհք մը չէ՞ մեզի պէս
ծառաներու համար՝ երկինքի Թա-
գաւորին համար նախատուիլը:
Շնորհք մը չէ՞ ցաւ կրել Յիսուսի

համար՝ որ ամեն տեսակի ցաւ կրեց մեր փրկութեան համար: Եթէ Յիսուս մեզի համար ցաւ կրեց, մենք ի՞նչպէս կը մերժենք իրեն համար ցաւ կրել: Եթէ Յիսուս մեր սիրոյն համար վիրաւորուեցաւ ու լռեց, մենք ի՞նչպէս կը մերժենք իր սիրոյն համար վիրաւորուիլ ու լռել: Եթէ Յիսուս անմեղ էր ու նախատուեցաւ, մենք ի՞նչպէս կ'ընդվզինք երբ նախատուինք, մենք՝ որ մեղաւորներ ենք: Մե՛ծ պիտի ըլլայ մեր վարձքն ու ցընծութիւնը, եթէ Յիսուսի հետեւորդները ըլլալնուս համար հալածուինք ու զրպարտուինք (Մտ 5.11-12):

Խօսինք փորձութեանց բարիք-ներուն ու նպատակներուն մասին.-

Փորձութիւնը առիթ՝ վկայելու:

1) Փորձութիւնը բարիք մըն է մեզի համար, որովհետեւ ատիկա առիթ է վկայելու Յիսուսի մասին, համաձայն նոյնինքն Յիսուսի խօսքին. *«Ձեզ պիտի ձերբակալեն եւ հալածեն, ձեզ պիտի դատեն ժողովարաններու մէջ: Ասիկա ձեզի առիթ պիտի ըլլայ վկայութիւն տալու իմ մասին»* (Ղկ 21.12-13): Երբ կը մերժենք փորձութիւնը, ցաւը, նեղութիւնը, վիրաւորական խօսքը, կը նշանակէ թէ չենք ուզեր

վկայութիւն տալ Յիսուսի մասին, անոր սիրոյն ու քաղցրութեան մասին, անոր բարութեան ու բարիքներուն մասին, մեզի համար անոր թափած արեան ու քրտինքին մասին, իր արիւնտվ մեզի պարգեւած՝ իր փրկութեան մասին: Ամէն մէկ փորձութիւն որ մեզի կը ներկայանայ՝ առիթ է վկայութիւն տալու եւ փաստելու որ կը սիրենք Յիսուսը ու կը հաւատանք անոր: Օրինակ, երբ մէկը մեզ կ'ատէ՝ սէ՛ր ցոյց տանք անոր հանդէպ, եւ մենք վկայած ու փաստած պիտի ըլլանք թէ կը սիրենք Յիսուսը, եւ մարդոց ցոյց տուած պիտի ըլլանք թէ այն Յի-

սուսը որուն կը հետեւինք ու կը պաշտենք՝ Սէր է, սիրոյ Իշխան է, սիրոյ Թագաւոր է, սիրոյ Աստուած է: Երբ կը մերժենք ռեւէնելութիւն կրել, կը նշանակէ թէ չենք ուզեր վկայութիւն տալ մեզի համար ու մեր պատճառով մեռնող Յիսուսին մասին, մեզի արքայութիւն ու փրկութիւն խոստացողին մասին: Մեզի համար պէտք է յստակ ըլլայ, թէ ամէն մէկ փորձութիւն առիթ մըն է. առիթ ի՞նչ բանի համար. առիթ՝ կա՛մ տրտընջալու Քրիստոսի դէմ, եւ կամ՝ փորձութիւնը համբերութեամբ ու ժպիտով տանելու, փառք տալով տանելու, եւ ասիկա ըլլայ մեր

վկայությունը թե մենք իսկապես
կը սիրենք Քրիստոսը:

2) Փորձությունը առիթ՝ Աստու-
ծոյ ներկայությունը վայելելու:

Ընդհանրապես մարդիկ, ներ-
առեալ հաւատացեալները, երբ
փորձութեան մը հանդիպին, ան-
միջապէս կ'աղօթեն ու կը խնդրեն
Աստուծմէ որ այդ փորձությունը
հեռացնէ իրենցմէ: Մենք կը մոռ-
նանք, որ Աստուած կը փափաքի
փորձութեանց ժամանակ գալ եւ
մեր կողքին կանգնիլ, եւ ո՛չ թէ
փորձութիւնները հեռացնել մեզմէ:
Մտաբերենք օրինակը Մեղրաքին,

Միսաքին ու Աբեղնագովին: Ի՞նչ
ըրաւ Աստուած երբ Նաբուգոդո-
նոսոր զանոնք կրակի հնոցին մէջ
նետեց: Զանոնք դո՛ւրս բերաւ
կրակի հնոցէն. ո՛չ. այլ ի՛նք զնաց
եւ անոնց կողքին կեցաւ կրակին
մէջ (Դն 3.24-25): Եւ ի՞նչ եղաւ
արդիւնքը այս հրաշքին: Արդիւն-
քը եղաւ այն՝ որ Նաբուգոդոնոսոր
դարձի եկաւ եւ ճանչցաւ ճշմա-
րիտ Աստուածը եւ պատուիրեց
միայն զայն պաշտել (Դն 3.28-29):
Նոյն բանը կրնայ ըլլալ մե՛ր ալ
կեանքին մէջ: Ուստի, երբ փորձու-
թեան մը հանդիպինք, չխնդրենք
Աստուծմէ որ զանիկա հեռացնէ
մեզմէ, այլ խնդրենք՝ որ զայ ու

մեր կողքին կանգնի փորձութեան
ժամանակ, նախ, որպէսզի իրմով
յաղթենք փորձութեան, եւ երկրորդ,
որպէսզի մարդիկ տեսնեն Աս-
տուծոյ ներկայութիւնը մեր կեան-
քին մէջ, եւ մե՛ր պատճառով ու
մե՛ր միջոցաւ ճանչնան զԱստ-
ուած եւ հանդիպին անոր: Աւելի
լաւ է փորձութեան հանդիպիլ եւ
Աստուծոյ ներկայութիւնը ունենալ
մեր հետ, քան բնաւ չհանդիպիլ
փորձութեան եւ զրկուիլ Աստուծոյ
ներկայութենէն: Բազմաթիւ են օրի-
նակները որոնք ցոյց կու տան թէ
Աստուած իր զաւակներուն կողքին
կը կանգնի նեղութեան ժամանակ:
Յիշեմ անոնցմէ փունջ մը: Երբ Յով-

սէփ բանտ նետուեցաւ, Աստուած
զայն բանտէն դուրս չբերաւ, այլ
ի՛նք զնաց անոր հետ ըլլալու բան-
տին մէջ. «Տէրը Յովսէփին հետ
էր» (Ծն 39.20-21): Անոր եղբայր-
ները բանտէն դուրս էին, ազատ
էին, բայց Աստուած անոնց հետ
չէր: Աստուած Մովսէսի հետ էր
երբ ան պիտի երթար Եգիպտոսի
Փարաւոնին հանդիպելու (Ել
3.11-12): Դաւիթին հետ էր երբ ան
պիտի երթար Գողիաթին դէմ մե-
նամարտելու (Ա.Թգ 17.41-51):
Դանիէլին հետ էր երբ ան առիւծ-
ներու գոբին մէջ նետուեցաւ (Դն
6.21-22): Եղիային հետ էր երաշտի
ժամանակ եւ զայն կը կերակրէր

ագռաներուն միջոցաւ (Գ.Թգ 17):
Եղիային հետ էր երբ ան Բահաղի
չորս հարիւր յիսուն մարգարէնե-
րուն մարտահրաւեր կը կարդար
(Գ.Թգ 18): Երեմիային հետ էր երբ
ան չոր ջրհորի մը մէջ նետուեցաւ
(Եր 38): Պետրոսին հետ էր երբ
ան բանտին մէջ կը գտնուէր (Գրծ
12.7): Պօղոս եւ Շիդա առաքեալ-
ներուն հետ էր երբ անոնք բան-
տին մէջ կ'աղօթէին եւ զԱստուած
կ'օրհնէրգէին (Գրծ 16.25-26),
Ստեփանոսին հետ երբ ան կը
քարկոծուէր (Գրծ 7.55-58): Զվախ-
նանք փորձութիւններէն այնքան
ատեն երբ փորձութեանց յաղթա-
հարիչ Աստուածը մեզի հետ է:

3) Փորձությունը մեզ Յիսուսի պատկերը կը դարձնէ:

Այն փորձությունները որոնց մէջ ցաւ կայ՝ անոնք մեզ Քրիստոսի պատկերը կը դարձնեն: Պօղոս առաքեալ Գաղատացիներուն կ'ըսէ. *«Իմ ձագուկներս էք դուք, բայց ահա դարձեալ մօր մը պէս երկունքի ցաւ կը քաշեմ ձեզի համար, մինչեւ որ Քրիստոսի հարազատ պատկերը դառնաք»* (Գղ 4.19): Արդարեւ, սիրելիներ, «դառն» իրականութիւնը այն է՝ որ ցաւն է որ մեզ Քրիստոսի պատկերը կը դարձնէ: Ո՛չ որ Քրիստոսի պատկերը դարձած է կամ կրնայ դառ-

նալ անդադար Աստուածաշունչ
կարդալով, աղօթելով, կամ եկե-
ղեցի երթալով: Պատմութեան ըն-
թացքին բոլոր անոնք որոնք սրբա-
բացան՝ ցա՛ւն է որ զիրենք սրբա-
ցուց: Ինչպէս կրակն է որ ոսկին
զուտ ոսկի կ'ընէ, այնպէս ալ,
փորձութեանց ու ցաւի կրա՛կն է
որ մեզ Տիրոջ ճշմարիտ պատկերը
կը դարձնէ: Երբ կը բամբասուինք,
կը հալածուինք, կը նախաստուինք,
եւ այս բոլորին պատճառով կը
ցաւինք ու ցաւը համբերութեամբ,
սիրով ու աղօթքով կը տանինք՝
ճիշդ հո՛ւ է որ կը սկսինք տաշ-
ուիլ ու աստիճանաբար Տիրոջ հա-
րազատ պատկերը դառնալ:

4) Փորձութեանց արդիւնքը՝ յաւիտենական կեանքն ու փառքն է:

Պօղոս առաքեալ կը վկայէ, թէ մենք *«Քրիստոսի չարչարանքներուն մասնակից կ'ըլլանք՝ որպէսզի իր փառքին եւս մասնակից ըլլանք»* (Հռ 8.17): Համաձայն առաքելաւի այս խօսքին, երբ հաւատացեալը չարչարանքներէ կ'անցնի՝ ատիկա Քրիստոսի չարչարանքներուն մասնակցութիւն է: Պետրոս առաքեալ նաեւ կրակի նման այրող փորձութիւններէ անցնիլը՝ Յիսուսի չարչարանքներուն մասնակցութիւն կը համարէ (Ա.Պտ 4.12-13): Պօղոս առաքեալ մեզ քա-

ջալերելու ու գօտեպնդելու համար, մեկ քայլ առջեւ կ'երթայ ու կ'ըսէ, թէ Քրիստոսի չարչարանքներուն մասնակից եղողը՝ անոր փառքին ալ մասնակից պիտի ըլլայ: Արդարեւ, ամէն տառապանք որ Քրիստոսի փառքին համար կը տանինք՝ մեզ Քրիստոսի փառքին կ'արժանացնէ: Ամէն նեղութիւն որ Յիսուսի սիրոյն համար կը տանինք՝ մեզ Յիսուսի սիրոյ թագաւորութեան ժառանգորդ կը դարձնէ: Ամէն նախատինք ու չարչարանք որ կը կրենք երկրի վրայ անոնք երկինքի փառքն է որ մեզի համար կը պատրաստեն, եւ *«ներկայ ժամանակի չարչարանք-*

*ները ոչի՛նչ են գալիք փառքին
քով՝ որ մեզի պիտի յայտնուի» (Հռ
8.18): Կարեւոր է յիշել, որ ամեն
չարչարանք մեզ մեքենաբար եր-
կինք չ'առաջնորդեր: Երկինքի
համար չարչարուողնէ՛րը միայն
երկինք պիտի մտնեն: Յիսուսի
համար տառապողնէ՛րը միայն
Յիսուսը պիտի վայելեն յաւիտե-
նականութեան մէջ: Պետրոս
առաքեալ խօսելէ ետք Քրիստոսի
համար չարչարուողներուն մա-
սին՝ կ'ըսէ. «*Խօսքս անոնց մասին
չէ, որոնք կը չարչարուին իբրեւ
մարդասպան կամ գող, իբրեւ չա-
րագործ կամ խառնակիչ: Բայց ով
որ քրիստոնէայ ըլլալուն համար**

*կը չարչարուի թող չամչնայ, այլ՝
իր այդ անունով զԱստուած փա-
ռաւորէ» (Ա.Պտ 4.15-16):*

5) Փորձութիւնը կրնայ Յիսուսի
ներկայութեան արդիւնքը ըլլալ:

Յիսուս իր աշակերտներուն
հետ նաւուն մէջ էր երբ փոթորի-
կը պատահեցաւ (Մր 4.35-41):
Անոր ներկայութիւնը պատճառ
չեղաւ որ փոթորիւնը չպատա-
հէր: Ուստի, կը սխալին անոնք՝
որոնք կը խորհին թէ կեանքի
փորձութիւնները անպայման որ
արդիւնք են Աստուծոյ բացակա-
յութեան, կամ մեր հաւատքի պա-

կասութեան, կամ մեր մեղաւորութեան: Յիսուս կրնայ մեր ալ կեանքի նաւուն մէջ ըլլալ, բայց անոր ներկայութիւնը ոչ թէ փորձութիւնները կը հեռացնէ, այլ մեզ յաղթող կը դարձնէ անոնց դէմ: Մեզմէ ո՞վ չի գիտեր թէ Քրիստոսը ուրացող այս աշխարհին մէջ Քրիստոսի հետեւիլը՝ մեզ բնականօրէն փորձութեան պիտի ենթարկէ: Մենք կ'ապրինք աշխարհի մը մէջ որուն իշխանը Սատանան է (Յհ 12.31, 14.30, 16.11), եւ բնական է որ նման աշխարհի մը մէջ ապրող հաւատացեալը հալածուի, նախատուի ու անարդարութիւններու հանդիպի: Հաւա-

տացեալ մարդը կեանքի փորձութեանց դիմաց պէտք է հաստատ մնայ, գիտնալով որ եթէ Չարը կարող է, ապա իր Տէրն ու Փրկիչը՝ ամենակարող է: Մեր գլուխը հռչակենք Քրիստոսը, եւ ան մեր կեանքին մէջ ու մեր միջոցաւ պիտի ճզմէ գլուխը Չարին:

6) Փորձութիւնը կրնայ Աստուծոյ բացակայութեան արդիւնքը ըլլալ:

Նախորդ կէտին մէջ ցոյց տուի, թէ մէկը կրնայ փորձութիւններէ անցնիլ Քրիստոսի հետեւորդ մը ըլլալուն համար, բայց եւ այնպէս, կրնայ նաեւ փորձութիւններէ

անցնիլ Աստուծմէ հեռու ըլլալուն
համար: Ուստի երբ փորձութիւն-
ներէ կ'անցնիք, պէտք է մենք մեզ
ու մեր կեանքը քննենք ու տես-
նենք թէ ինչո՞ւ համար կ'անցնինք
փորձութիւններէ: Արդեօք փոր-
ձութիւններէ կ'անցնինք մեր հա-
ւատքի՞ն համար, թէ՛ մեր անհա-
ւատութեան համար. մեր մաքուր
ըլլալո՞ւն համար, թէ՛ մեր անմա-
քուր ըլլալուն համար: Երբ Իսրա-
յէլացիներ տրտնջացին Աստուծոյ
դէմ իրենց դիմագրաւած փորձու-
թիւններուն համար՝ խորհեցան
թէ Աստուած լքած էր զիրենք: Աստ-
ուած անունը պարզեց, թէ իրե՛նք
լքած էին զինք եւ ո՛չ թէ ինք լքած

էր զիրենք. «Չէ՞ որ ասիկա դուն
քու վրադ բերիր քու Տէր Աստուա-
ծըդ ձգելով, երբ անիկա ճամբուն
մէջ քեզի առաջնորդութիւն կ'ը-
նէր» (Եր 2.17): Քիչ մը անդին Տէրը
կը յայտնէ անոնց, թէ իրենց գըլ-
խուն եկածը՝ արդիւնքն էր իրենց
չարութեան եւ անհաւատարմու-
թեան (Եր 2.19: Տե՛ս նաեւ՝ Եր 4.18:
Բ.Մն 7.21-22):

7) Փորձութիւնը առիթ՝ մեր ըն-
թացքը փոխելու:

Ո՛չ ոք կրնայ ուրանալ թէ փոր-
ձութիւնները կրնան դաստիարակ-
չական ըլլալ, այսինքն, անոնց

նպատակը՝ կրնայ մեր անձերուն սրբագրութիւնը ըլլալ: Այս առումով, երբ փորձութեան (ցաւի, տառապանքի, նեղութեան, հալածանքի) մը ենթարկուինք, չխնդրենք Աստուծմէ հեռացնէ մեզմէ փորձութիւնը, այլ խնդրենք՝ որ ցոյց տայ մեզի թէ տուեալ փորձութեամբ ի՞նչ կ'ուզէ սորվեցնել մեզի, ի՞նչ բան կ'ուզէ սրբագրել մեր կեանքին մէջ, ո՞ր մեղքէն կամ մոլութենէն կ'ուզէ ձերբազատել մեզ: Երբեմն Աստուած փորձութեան մը միջոցաւ մեզ կը ցացնէ՝ մեզ ապաշխարութեան բերելու նպատակով: Նոյնը չ'ըսեր Պօղոս առաքեալ. *«Աստուած*

երբեմն մեզ կը ցուցնէ՝ ապաշխարութեան միջոցաւ փրկութեան առաջնորդելու նպատակով» (Բ.Կր 7.10): Յաջորդող համարին մէջ առաքեալը կը պարզէ, թէ Աստուծոյ պատճառած ցաւը մեզ դուրս կը բերէ անտարբերութենէն (Բ.Կր 7.11): Իսկ Յյտ 3.19-ին մէջ կը կարդանք. «*Ես իմ սիրած անձերս կը յանդիմանեմ ու կը խրատեմ. ուստի նախանձախնդիր եղիր եւ ապաշխարէ՛*»: Հոս «կը խրատեմ» չի նշանակեր՝ խօսքով կը յորդորեմ. «խրատել» բառը Գրաբարի մէջ կը նշանակէ՝ պատժել: «Յանդիմանել» բառը նաեւ պէտք չէ հասկնալ սոսկ խօսքով յանդիմա-

նութիւնը. Աստուած կրնայ փորձութեան մը միջոցաւ յանդիմանել մեզ եւ ապաշխարութեան առաջնորդել. կրնայ թոյլ տրուած ցաւի մը միջոցաւ խրատել մեզ եւ պատճառ դառնալ որ փոխենք մեր կեանքի ընթացքը:

8) Փորձութիւնը ամիթ ու պատճառ՝ մեր բարձրացումին:

Աստուած կրնայ թոյլ տալ փորձութիւն մը նպատակ ունենալով՝ մեր բարձրացումը: Եթէ Յովսէփին եղբայրները զինք չատէին ու Պետափրէս դահճապետին չծախէին, Յովսէփ պիտի չհասներ Փարաւո-

նի գահակցութեան պատիւին:
Ուստի, երբ մարդիկ մեզ ատեն ու
մերժեն՝ չնեղուինք, այլ մեր խնդի-
րը Տիրոջ ձեռքերուն մէջ դնենք եւ
իր կամքին կատարումը խնդրենք:
Երբ Տէրը տեսնէ որ իր կամքին
կատարումը կը խնդրենք՝ իր կամ-
քով մեզ պիտի բարձրացնէ եւ մեր
թշնամիներուն աչքերուն առջեւ՝
սեղան պիտի պատրաստէ մեզի
համար (Սղ 23.5): Աստուած գիտէ
մեզի դէմ ծրագրուած չարիքներէն
բարիքներ դուրս բերել մեզի հա-
մար (Ծն 50.20): Գիտէ մեզի դէմ
կատարուած անէծքները օրհնու-
թեան փոխակերպել (Թւ 24.10-13):

9) Փորձությունը առիթ՝ ճանչնալու Տիրոջ զորությունը:

Յիսուս թոյլ տուաւ որ զօրաւոր հով մը փոթորկէր լիճը, եւ ապա ոտքի ելաւ եւ սոսկ բառով մը խաղաղեցուց լիճը: Աշակերտները զարմացած ու վախցած իրարու ըսին. *«Ո՞վ է արդեօք այս մարդը, որ նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին իրեն»* (Մր 4.41): Աշակերտները գիտէին որ Յիսուս Տէրն էր երկրին, բայց այս փորձութենէն ետք՝ անոնք գիտցան որ Յիսուս Տէրն է նաեւ ծովերուն, հովին ու երկինքին: Փորձութեանց այլազանությունը եւ անոնց յաղթահարու-

մը ցոյց կու տայ որ Յիսուս ամէն քանի Տէրն ու Իշխանն է, եւ չկա՛յ փորձութիւն մը որ կրնայ տեղի ունենալ առանց իր թոյլտուութեան, եւ չկա՛յ փորձութիւն մը որ չի յաղթահարուիր իր մէկ բառով, եւ ամէն մէկ փորձութիւն որ կը յաղթահարուի՝ կու գայ նոր ձեւով մը ճանչցնելու մեզի Յիսուսը:

10) Փորձութիւնը առիթ՝ Չարին ցուցնելու որ մենք Աստուծոյ հաւատարիմ զաւակներն ենք:

Սատանան կը խորհէր թէ Յոր զԱստուած կը պաշտէր, քանի կը վայելէր Աստուծոյ բարիքներն ու

օրհնութիւնները (Յոբ 1.9-10): Ան խնդրեց Աստուծմէ որ թոյլ տայ իրեն հարուածելու Յոբն ու անոր ընտանիքը, ինչպէս նաեւ ամբողջ ունեցուածքը: Սատանան հարուածեց Յոբը, եւ տեսաւ որ ան ընտիր հաւատացեալ մըն էր: Յոբին հաւատքը Աստուծոյ հանդէպ ա՛լ աւելի զօրացաւ. ա՛յնքան զօրացաւ՝ որ ան յայտարարեց, որ նոյնիսկ եթէ Աստուած զինք սպաննէ՝ ինք պիտի շարունակէ անոր յուսալ (Յոբ 13.15: Տե՛ս նաեւ՝ Յոբ 27.5-6):

Միրելիներ, փորձութիւնները առիթ դարձնենք ցոյց տալու Մատանային, որ մենք ընտիր ու ճշմարիտ հետեւորդներ ենք Քրիստոսի: